ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

25 հոկտեմբեր 2019թ.
ժամը 09:00

*Մասնակցում էին*
*հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Ղազարյան,*
*անդամներ՝ Անի Մելիքսեթյան /ԲԱ/, Արմինե Սահակյան/ԲԱ/, Նաիրա Թումանյան /ԳԱ/, Արմինե Աբրահամյան/ԳԱ/*
*քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան*

***<<ՀՀ-ՍՄԿՀ- ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

1.Ընդունել ի գիտություն, որ

1.1 <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է՝
1-ին չափաբաժին՝ 10187130 դրամ/առանց ԱԱՀ, ըստ նախահաշվային փաստաթղթերի/,
2-րդ չափաբաժին՝ 13134240 դրամ/առանց ԱԱՀ, ըստ նախահաշվային փաստաթղթերի/,

1.2<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտ են ներկայացրել.

| ՀՀ | Մասնակցի անվանումը /անունը/ | Էլ. հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ | info@zaqaryancs.com |
| 2 | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ | gevorgyan.nersisyan@mail.ru |
| 3 | <<Բազալտշին>> Ա/Կ | bazaltshin1@mail.ru |

2.Մասնակցի կողմից ներկայացված հայտերը ընդունվել և սահմանված կարգով բացվել են բացող անդամների կողմից, համարվել հետագա գնահատման համար ընդունելի և ներկայացվել գնահատման հաջորդ փուլ:

3.Հանձնաժողովի անդամների գնահատմամբ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ՝

3.1. <<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ կողմից ներկայացված հայտում լիցենզիան էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է 2019թ. հոկտեմբերի 2-ի ամսաթվով, ինչպես նաև Հավելված 1-ում հստակ նշված չեն չափաբաժինների համարները, մինչդեռ փաթեթը վավերացված և ներբեռնված է համակարգ 2019թ. հոկտեմբերի 19-ին,

3.2.<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտում լիցենզիան էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է 2019թ. սեպտեմբերի 17-ի ամսաթվով, մինչդեռ փաթեթը վավերացված և ներբեռնված է համակարգ 2019թ. հոկտեմբերի 24-ին,

3.3.<<Բազալտշին>> Ա/Կ կողմից ներկայացված հայտում լիցենզիան էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված է 2019թ. հոկտեմբերի 16-ի ամսաթվով, մինչդեռ Ա/Կ-ի կողմից Հրաչիկ Ավետիսյանին ստորագրությամբ վավերացնելու լիազորագիր տրամադրված է 2019թ. հոկտեմբերի 23-ին և փաթեթը վավերացված ու ներբեռնված է համակարգ 2019թ. հոկտեմբերի 24-ին,

4.Հանձնաժողովը որոշեց՝

4.1Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել մասնակիցներ <<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ-ին, <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ին, <<Բազալտշին>> Ա/Կ-ին 1 աշխատանքային օրում շտկել արձանագրված անհամապատասխանությունները,

4.2Հայտերի բացման նիստը շարունակել նշված ժամկետի ավարտից հետո՝ 2019թ. հոկտեմբերի 29-ին, ժամը 9:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ ________________ Դ. Ղազարյան

անդամներ ________________ Ա. Աբրահամյան

________________ Ն. Թումանյան

________________ Ա. Մելիքսեթյան

________________ Ա. Սահակյան

քարտուղար ________________ Լ. Ավետիսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան

29 հոկտեմբեր 2019թ.
ժամը 09:00

*Մասնակցում էին*
*հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Ղազարյան,*
*անդամներ՝ Անի Մելիքսեթյան /ԲԱ/, Արմինե Սահակյան/ԲԱ/, Նաիրա Թումանյան /ԳԱ/, Արմինե Աբրահամյան/ԳԱ/*
*քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան*

***<<ՀՀ-ՍՄԿՀ- ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին/շարունակություն/***

1.Ընդունել ի գիտություն, որ

1.1<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 25.10.2019թ. և շարունակվել 29.10.2019թ.,

1.2 <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է
1-ին չափաբաժին՝ 10187130 դրամ/առանց ԱԱՀ, ըստ նախահաշվային փաստաթղթերի/,
2-րդ չափաբաժին՝ 13134240 դրամ/առանց ԱԱՀ, ըստ նախահաշվային փաստաթղթերի/,

1.3<<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ, <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ, <<Բազալտշին>> Ա/Կ կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են անհամապատասխանությունները և ներկայացվել, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված չափանիշներին,

2.Գնահատող անդամների գնահատմամբ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը <<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին համապատասխանում են հետևյալ կերպ.

| ՀՀ | Հրավերով սահմանված նվազագույն պահանջները | Մասնակցի անվանումը, գնահատումը | | |
|---|---|---|---|---|
| | | <<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ | <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ | <<Բազալտշին>> Ա/Կ |
| 1. | Պիտանելիության և տեխնիկական չափորոշիչ | Համապատասխանում է | Համապատասխանում է | Համապատասխանում է |
| 2. | Ֆինանսական չափորոշիչ | Չի համապատասխանում | Համապատասխանում է | Համապատասխանում է |

2.<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-19/4Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

| Մասնակիցը | Գնման առարկայի անվանումը | | Գինը առանց ԱԱՀ /դրամ/ | ԱԱՀ /դրամ/ | Ընդամենը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| <<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ | Միջոցառումների սրահների՝ տաղավարների կառուցման աշխատանքներ | 1-ին չափ. | 3110000 | 622000 | 3732000 |
| | | 2-րդ չափ. | 1455000 | 291000 | 1746000 |
| <<Բազալտշին>> Ա/Կ | Միջոցառումների սրահների՝ տաղավարների կառուցման աշխատանքներ | 1-ին չափ. | 9165000 | 1833000 | 10998000 |
| | | 2-րդ չափ. | 11816500 | 2363300 | 14179800 |
| <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ | Միջոցառումների սրահների՝ տաղավարների կառուցման աշխատանքներ | 1-ին չափ. | 9879000 | 1975800 | 11854800 |
| | | 2-րդ չափ. | 12736000 | 2547200 | 15283200 |

3.Հանձնաժողովը որոշեց՝

-<<Բազալտշին>> Ա/Կ-ին ճանաչել առաջին, <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ին 2-րդ տեղ զբաղեցնող մասնակիցներ,

-ծանուցել <<Բազալտշին>> Ա/Կ՝ ներկայացնելու հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը,

-հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ՝ <<Բազալտշին>> Ա/Կ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար,

-մերժել <<Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս>> ՓԲԸ կողմից ներկայացված հայտը. հիմք՝

1.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին՝ ներկայացված է միավոր/1/ տաղավարի կառուցման գնային առաջարկ, պետք է ներկայացվեր ընդհանուր գնային առաջարկ՝ 1-ին չափաբաժին՝ 3 տաղավարի համար, 2-րդ չափաբաժին՝ 7 տաղավարի համար:

2.Միաժամանակ՝ առաջին չափաբաժնի մասով ընդհանուր գումարը սյունակում տառերով և թվերով գրվածների միջև առկա է անճշտություն/երեք միլիոն յոթ հարյուր երեսուներկու հազար ՀՀ դրամի փոխարեն գրված է երեք միլիոն յոթ հարյուր քսան հազար ՀՀ դրամ/»

4.Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5"Հանձնաժողովի հաջորդ՝ գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան ՀՀ ՊԵԿ տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 09:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ ---------------------------- Դ. Ղազարյան

անդամներ ---------------------------- Ա. Աբրահամյան

---------------------------- Ն. Թումանյան

---------------------------- Ա. Մելիքսեթյան

---------------------------- Ա. Սահակյան

քարտուղար ---------------------------- Լ. Ավետիսյան